<ՅՈՒՆԻԲԱՆԿ> ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ
2022Թ. ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Zoom հավելվածի միջոցով իրական ժամանակի ռեժիմում
երկուշաբթի, 22 մայիսի 2023թ., 14:10

Մասնակցեցին՝
Բաժնետերեր
14 բաժնետեր նիստի բացման պահին

Բանկի Խորհուրդ
Գագիկ Զաքարյան (նախագահ)
Հրահատ Արզումանյան
Վարդան Աթայան
Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտ

Բանկի Վարչություն
Մեսրոպ Հակոբյան (նախագահ)
Արարատ Ղուկասյան
Գոհար Գրիգորյան
Օվսաննա Առաքելյան
Գուրգեն Ղուկասյան
Դավիթ Պետրոսյան
Արթուր Ապերյան
Սերգեյ Քոչարյան

Հրավիրվածներ
ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչներ Մարիամ Ժամկոչյան, Էմմա Պետրոսյան
Հայաստանի Բանկերի Միության գործադիր տնօրեն Սեյրան Սարգսյան
<Գրանթ Թորնթոն> ՓԲԸ գործադիր տնօրեն Արմեն Հովհաննիսյան
<Արմբրոկ> ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն Արամ Կայֆաջյան
Ներքին աուդիտի տնօրեն Արթուր Ղուկասով

Ժողովի քարտուղար նշանակվեց Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աննա Բադոյանը:

Աննա Բաղոյանը ներկայացրեց, որ 22.05.2023թ. <Յունիբանկ> ԲԲԸ Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի քվեարկությունն իրականացվել է քվեաթերթիկների միջոցով: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմված է 2023թ. մայիսի 04 դրությամբ:
Ժողովի գումարման մասին հայտարարությունը պատշաճ կերպով տեղադրվել է Բանկի պաշտոնական կայքէջում, հրապարակվել է <Ժողովուրդ> օրաթերթում, ծանուցումները քվեարթերթիկների հետ միասին ուղարկվել են բաժնետերերին փոստի միջոցով 05.05.2023թ-ին:
Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացրած քվեաթերթիկների ընդունումն ավարտվել է 22.05.2023թ-ին՝ մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահը: Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը կազմվել է 22.05.2023թ-ին:

Բանկի քվեարկող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի գումարային ձայների քանակը կազմել է 172.886.525 հատ, որից քվեարկությանը մասնակցել է ձայնի իրավունք ունեցող 169.397.282 բաժնետոմս, կամ տոկոսային հարաբերությամբ 97,98%-ը:
Քվորումն ապահովված է:

Ժողովի նահագահ Գագիկ Զաքարյանը բացեց նիստը և ողջունեց բոլոր բաժնետերերին և հյուրերին: Նշեց, որ չնայած աշխարհաքաղաքական ռիսկերին՝ 2022 թվականը Հայաստանի տնտեսության, այդ թվում՝ բանկային համակարգի համար հաջողակ և արդյունավետ տարի էր: Յունիբանկն արագ արձագանքեց շուկայի փոփոխություններին և մշակեց համապատասխան մեխանիզմներ: Հայաստան տեղափոխված բիզնեսների և ռելոկանտների հոսքով պայմանավորված՝ առաջին պլան մղվեցին քարտային և արժութային գործարքները, միջազգային դրամական փոխանցումները: Ճիշտ ռազմավարության արդյունքում հաշվետու տարում Յունիբանկը ապահովեց մոտ 4,4 միլիարդ դրամի զուտ շահույթ:

Ժողովի նախագահը նշեց Բանկի ձեռքբերումները pos-վարկավորման և ՓՄՁ ֆինանսավորման ոլորտում, ինովացիոն տեխնոլոգիաների ներդրման և պրեմիում սեգմենտի զարգացման բնագավառներում: Աջակցելով ֆինտեխ ծառայությունների ինտենսիվ զարգացմանը՝ Յունիբանկը կազմակերպեց Երևանում FINTECH360 միջազգային համաժողովը, որը մեկ հարթակի վրա միավորեց ավելի քան 200 մասնագետների՝ ֆինանսական տեխնոլոգիաների արդի միտումները և նորարարությունները քննարկելու, փորձով փոխանակվելու համար:

Գագիկ Զաքարյանը նշեց, որ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ներքո Յունիբանկն ակտիվորեն աջակցել է կրթական ծրագրերին, այդ թվում՝ սկսել է համագործակցել Մատենա միջազգային բիզնես դպրոցի և Պոլիտեխնիկական համալսարանի հետ, դարձել է Համահայկական ինտելեկտուալ շարժման մշտական գործընկերը:

Ամփոփելով՝ **Գագիկ Զաքարյանը** շնորհակալություն հայտնեց Բանկի բաժնետերերին, հաճախորդներին, գործընկերներին՝ վստահության և հավատարմության համար, աշխատակիցներին՝ արդյունավետ աշխատանքի համար, առանձնահատուկ երախտագիտություն հայտնեց Կենտրոնական բանկին, Հայաստանի Բանկերի Միությանը, ֆոնդային բորսային՝ համատեղ արդյունավետ աշխատանքի համար:

Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը խոսքը փոխանցեց Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանին՝ 2022 թվականին կատարած աշխատանքների վերաբերյալ Վարչության հաշվետվությունը ներկայացնելու համար:

Հարց 1. <Յունիբանկ> ԲԲԸ 2022թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվության հաստատում:

Վարչության նախագահ-գործադիր տնօրեն Մեսրոպ Հակոբյանը ներկայացրեց <Յունիբանկ> ԲԲԸ 2022թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվությունը: Նշեց, որ

համաշխարհային տնտեսության տուրբուլենտության պայմաններում Բանկն օպերատիվորեն վերանայեց իր մոտեցումները կիրառվող գործիքակազմի մասով. զգալիորեն խստացրեց ռիսկերի գնահատման պահանջները, ներդրեց ներդրումային այլընտրանքային մեխանիզմներ, հարմարեցրեց գործիքները շուկայական փոփոխություններին: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի արդյունավետ միջոցների մշակմանը, վարկային պորտֆելի որակի բարելավմանը:

Մեսրոպ Հակոբյանն ամփոփ ներկայացրեց Բանկի ֆինանսական ցուցանիշները, մանրածախ և կորպորատիվ վարկավորման ոլորտներում ունեցած հաջողությունները: Ընդգծեց, որ 2023 թվականի ապրիլի վերջի դրությամբ Յունիբանկը վարկերի քանակով ՀՀ բանկային համակարգում զբաղեցրել է առաջին տեղը՝ թվով 409 հազար գործող վարկային պայմանագրերի ընդհանուր ծավալով: Ունենալով ակտիվ մասնակցություն սոցիալապես նշանակալի նախագծերի իրագործման գործում՝ Յունիբանկը դարձավ առաջատարը նաև Արցախի առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական ծրագրի շրջանակներում տրամադրված վարկերի ծավալով՝ բավարարելով 250 նպաստառու ընտանիքներ հայտեր:

Վարչության նախագահը նշեց, որ Բանկի ղեկավարության ուշադրության կետրոնում շարունակում էին մնալ կորպորատիվ կառավարման համակարգի և կադրային քաղաքականության կատարելագործման հիմնահարցերը: Պարբերաբար թարմացվել է Խորհրդին և Վարչությանը կից հանձնաժողովների կազմը, ներգրավվել է Խորհրդի անկախ անդամ Ֆիլիպ Դելմոտը, ով, ունենալով ներդրումային բանկերի ֆինանսական գործիքների կառավարման երկարամյա փորձ, համակարգում է Բանկի քաղաքականությունը ֆոնդային շուկայի գործիքներում ներդրումներ կատարելու ոլորտում:

Բանկային ոլորտում աշխատողների պատմականորեն բարձր հոսունության և արդիական մասնագիտություններով աշխատանքային ռեսուրսների սակավության պայմաններում Բանկին հաջողվեց հաղթահարել կադրային ճգնաժամը և ապահովել Բանկի անխափան գործունեությունը: Աշխատանքներ են սկսվել կազմակերպչական օպտիմալ կառուցվածք ձևավորելու, Բանկի կադրային քաղաքականության դերը բարձրացնելու ուղղությամբ՝ աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացման և կարիերայի առաջխաղացման մոտիվացիոն թափանցիկ սխեմայի ներդրման միջոցով:

Միջնաժամկետ հեռանկարում իրականացման համար Բանկի հիմնական ռազմավարական նախաձեռնությունների թվում **Մեսրոպ Հակոբյանն** առանձնացրեց բաժնետերերի կառուցվածքի ընդլայնումը, 4,5 մլրդ դրամ ծավալով սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման միջոցով կապիտալի ներգրավումը, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգերի ուժեղացումը՝ ինչպես գործընթացների ավտոմատացման, գործառնական մոդելի փոփոխման, այնպես էլ կադրերի պոտենցիալի բարձրացման միջոցով, թիրախային սեգմենտներում շուկայում դիրքերի ամրապնդումը, ֆինանսական տեխնոլոգիաների զարգացումը: Նշեց, որ շրջանակը կարող է ընդլայնվել ու համալրվել փոփոխվող իրողություններով թելադրված նոր խնդիրներով:

Եզրափակելով՝ **Մեսրոպ Հակոբյանը** շնորհակալություն հայտնեց բաժնետերերին՝ Յունիբանկի ռազմավարությանը հավատալու համար, հաճախորդներին և գործընկերներին՝ արդյունավետ համագործակցության համար, Յունիբանկի թիմին՝ պրոֆեսիոնալիզմի և արդյունավետ աշխատանքի համար: Համոզմունք հայտնեց որ միասնական ջանքերով Յունիբանկը նպատակաուղղված կլինի նորարարական զարգացմանը և նոր բարձունքների նվաճմանը:

Բաժնետերերի ժողովը հաստատեց <Յունիբանկ> ԲԲԸ 2022թ. գործունեության վերաբերյալ Վարչության հաշվետվությունը քվեարկության հետևյալ արդյունքներով.

կողմ՝ 169.397.282 ձայն կամ մասնակիցների ձայների 100%

դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Հարց 2. <Յունիբանկ> ԲԲԸ 2022թ. ֆինանսական հաշվետվությունների հաստատում: <Յունիբանկ> ԲԲԸ 2022թ. ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ <Գրանթ Թորնթոն> աուդիտորական ընկերության եզրակացության ներկայացում:

Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - գլխավոր հաշվապահ Գոհար Գրիգորյանը ներկայացրեց Խորհրդի կողմից նախնական հաստատված ըստ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կազմված Բանկի 2022 թվականի տարեկան հաշվետվությունները հետևյալ հիմնական ցուցանիշներով.

1. դրամական միջոցներ և դրանց համարժեքներ՝ 100,012,097 հազ ՀՀ դրամ
2. պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ՝ 31,943,460 հազ ՀՀ դրամ
3. հաճախորդներին տրված վարկեր և այլն փոխատվություններ՝ 119,828,158 հազ ՀՀ դրամ
4. ներդրումային արժեթղթեր՝ 44,730,472 հազ ՀՀ դրամ
5. վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր՝ 5,175,583 հազ ՀՀ դրամ
6. հիմնական միջոցներ՝ 10,896,975 հազ ՀՀ դրամ
7. ոչ նյութական ակտիվներ՝ 3,687,879 հազ ՀՀ դրամ
8. այլ ակտիվներ՝ 3,791,168 ՀՀ դրամ
9. ընդամենը ակտիվներ՝ 320,065,792 հազ ՀՀ դրամ
10. պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ՝ 16,603,170 հազ ՀՀ դրամ
11. պարտավորություններ հաճախորդների նկատմամբ՝ 252,805,069 ՀՀ դրամ
12. ածանցյալ ֆինանսական պարտավորություններ՝ 5,246 հազ ՀՀ դրամ
13. փոխառություններ՝ 4,278,478 հազ ՀՀ դրամ
14. թողարկված պարտքային արժեթղթեր՝ 9,147,395 հազ ՀՀ դրամ
15. եկամտային հարկի գծով ընթացիկ պարտավորություն՝ 311,014 հազ ՀՀ դրամ
16. հետաձգված հարկային պարտավորություն՝ 281,440 հազ ՀՀ դրամ
17. այլ պարտավորություններ՝ 2,517,120 հազ ՀՀ դրամ
18. ընդամենը պարտավորություններ՝ 285,948,932 հազ ՀՀ դրամ
19. բաժնետիրական կապիտալ՝ 21,588,653 հազ ՀՀ դրամ
20. էմիսիոն եկամուտ՝ 9,605,638 հազ ՀՀ դրամ
21. գլխավոր պահուստ՝ 641,779 հազ ՀՀ դրամ
22. այլ պահուստներ՝ 1,484,830 հազ ՀՀ դրամ
23. չբաշխված շահույթ (կուտակված վնաս)՝ 795,960 հազ ՀՀ դրամ
24. ընդամենը՝ սեփական կապիտալ՝ 34,116,860 հազ ՀՀ դրամ
25. ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ՝ 320,065,792 հազ ՀՀ դրամ

Բանկի եկամուտների և ծախսերի կառուցվածքը՝

- տոկոսային եկամուտ՝ 19,987,743 հազ ՀՀ դրամ
- տոկոսային ծախսեր՝ (10,072,314) հազ ՀՀ դրամ
- զուտ տոկոսային եկամուտներ՝ 9,915,429 հազ ՀՀ դրամ
- միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ՝ 11,843,885 հազ ՀՀ դրամ
- միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսեր՝ (2,685,090) հազ ՀՀ դրամ
- միջնորդավճարների և այլ վճարների գծով զուտ եկամուտ՝ 9,158,795 հազ ՀՀ դրամ
- զուտ առևտրային եկամուտ՝ 14,476,869 հազ ՀՀ դրամ

- այլ եկամուտներ՝ 966,177 հազ ՀՀ դրամ
- ակտիվների արժեզրկման ծախս՝ (17,241,935) հազ ՀՀ դրամ
- անձնակազմի գծով ծախսեր՝ (5,593,768) հազ ՀՀ դրամ
- հիմնական միջոցների մաշվածություն՝ (1,203,950) հազ ՀՀ դրամ
- ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա՝ (201,995) հազ ՀՀ դրամ
- այլ ծախսեր՝ (4,607,873) հազ ՀՀ դրամ
- շահույթ/(վնաս) մինչև հարկումը՝ 5,667,749 հազ ՀՀ դրամ
- շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում՝ (1,270,724) հազ ՀՀ դրամ
- տարվա շահույթ/(վնաս)՝ 4,397,025 հազ ՀՀ դրամ

Դրամական միջոցների հոսքը՝

- դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները՝ 24,315,163 հազ ՀՀ դրամ
- գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր՝ 97,048,701 հազ դրամ
- դրամական զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից՝ (36,556,373) հազ ՀՀ դրամ
- զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից՝ (6,172,223) հազ ՀՀ դրամ
- դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճը՝ 54,320,105 հազ ՀՀ դրամ
- արտարժույթի փոխանակման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա՝ (17,547,230) հազ ՀՀ դրամ
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ՝ 63,239,222 հազ ՀՀ դրամ
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ՝ 100,012,097 հազ ՀՀ դրամ

Գոհար Գրիգորյանը ներկայացրեց <Գրանթ Թորնթոն> աուդիտորական ընկերության եզրակացությունը, համաձայն որի Բանկի ֆինանսական հաշվետվությունները տալիս են <Յունիբանկ> բաց բաժնետիրական ընկերության 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Բաժնետերերի ժողովը <u>հաստատեց</u> <Յունիբանկ> ԲԲԸ 2022թ. ֆինանսական հաշվետվությունները քվեարկության հետևյալ արդյունքներով.

կողմ՝ 169.397.282 ձայն կամ մասնակիցների ձայների 100%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Հարց 3. 2022թ. Ներքին աուդիտի հաշվետվության հաստատում: <Յունիբանկ> ԲԲԸ ներքին հսկողության համակարգի վերաբերյալ Ներքին աուդիտի եզրակացության ներկայացում:

Ներքին աուդիտի տնօրեն Արթուր Ղուկասովը ներկայացրեց ըստ տարեկան աշխատանքային ծրագրի անցկացրած և արտապլանային աուդիտորական ստուգումների ոլորտները: Տարվա ընթացքում իրականացվել է համալիր ստուգում 12 մասնաճյուղերում, 49 մասնաճյուղերում՝ նպատակային ստուգումներ ըստ ոլորտների, գլխամասային գրասենյակում իրականացվել է գործունեության տարբեր ոլորտների աուդիտ, այդ թվում՝ 200 մլն դրամ և ավել գումարի առևտրային վարկերի, 100 մլն դրամ և ավել գումարի սպառողական վարկերի ստուգում և դրանց դիմաց ձևավորված պահուստների արժանահավատության գնահատում, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված միջոցառումների ստուգում, FATCA պահանջների, ՀՀ ԿԲ կանոնակարգերի պահանջներին համապատասխանության ստուգում:

Հայտնաբերված խնդիրների լուծման նպատակով կազմվել են միջոցառումների ծրագրեր, որոնց կատարման նկատմամբ իրականացվել է հետևողական հսկողություն:

Ներկայացնելով Բանկի ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ Ներքին աուդիտի կարծիքի հիմքում ընկած միջոցառումները՝ **Արթուր Ղուկասովը** եզրափակեց, որ Բանկի ներքին հսկողության համակարգը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն պայմաններին:

Բաժնետերերի ժողովը հաստատեց <Յունիբանկ> ԲԲԸ 2022թ. Ներքին աուդիտի հաշվետվությունը քվեարկության հետևյալ արդյունքներով.

կողմ՝ 169.397.282 ձայն կամ մասնակիցների ձայների 100%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Հարց 4. <Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի անդամների ընտրություն և քանակական կազմի հաստատում:

Մեսրոպ Հակոբյանը ներկայացրեց Խորհրդի անդամների ընտրության վերաբերյալ Խորհրդի հետևյալ առաջարկությունները՝

- Խորհրդի քանակական կազմը սահմանել յոթ հոգի,
- վերընտրել Խորհրդի անդամներ Գագիկ Զաքարյանին, Գեորգի Պիսկովին, Էդուարդ Զամանյանին, Հրահատ Արզումանյանին, Վարդան Աթայանին, Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտին, Խորհրդի կազմում ընդգրկել Ռուբեն Ինջիկյանին:

Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով՝ «Յունիբանկ» ԲԲԸ բաժնետեր «Uniholding GG Limited» ընկերության լիազոր ներկայացուցիչներ (սովորական բաժնետոմսերի քանակը՝ 155.572.240 հատ, արտոնյալ բաժնետոմսերի քանակը՝ 32.010.000 հատ)
Էդուարդ Զամանյան՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում
Հրահատ Արզումանյան՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում
Վարդան Աթայան՝ Բանկի բաժնետեր (սովորական բաժնետոմսերի քանակը՝ 5.483 հատ)
Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտ՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում
Ռուբեն Ինջիկյան՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում

Քվեարկության արդյունքներով թեկնածուները ստացել են ձայների հետևյալ քանակը.
Գագիկ Զաքարյան՝ 24.207.963 ձայն
Գեորգի Պիսկով՝ 24.197.880 ձայն
Էդուարդ Զամանյան՝ 24.187.717 ձայն
Հրահատ Արզումանյան՝ 24.187.717 ձայն
Վարդան Աթայան՝ 24.168.380 ձայն
Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտ՝ 24.191.267 ձայն
Ռուբեն Ինջիկյան՝ 24.191.250 ձայն

Բոլոր թեկնածուների դեմ՝ 0 ձայն
Թեկնածուների գծով ձեռնպահ՝ 0 ձայն
Անվավեր՝ 65.108 ձայն կամ մասնակիցների ձայների 0.04%

Բաժնետերերի ժողովը որոշում կայացրեց <Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի քանակական կազմը սահմանել յոթ հոգի: Վերընտրել Խորհրդի անդամներ Գագիկ Զաքարյանին, Գեորգի Պիսկովին, Էդուարդ

Զամանյանին, Հրահատ Արզումանյանին, Վարդան Աթայանին, Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտին, Խորհրդի կազմում ընդգրկել Ռուբեն Ինջիկյանին: Խորհրդի կազմը հաստատել հետևյալ կերպ՝ Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով, Էդուարդ Զամանյան, Հրահատ Արզումանյան, Վարդան Աթայան, Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտ, Ռուբեն Ինջիկյան:

Հարց 5. <Յունիբանկ> ԲԲԸ 2022թ. ֆինանսական արդյունքներով տարեկան շահութաբաժինների վճարման որոշման ընդունում:

Գոհար Գրիգորյանը ներկայացրեց, որ Բանկի 2022թ. ֆինանսական գործունեության արդյունքներով, Բանկի Խորհրդի 03.05.2023թ. որոշմամբ առաջարկվում է սովորական անվանական բաժնետոմսերի գծով տարեկան շահութաբաժիններ չվճարել, Բանկի՝ ըստ ՀՀՄՍ 4,397,025 հազ. ՀՀ դրամի չափով զուտ շահույթն ուղղել Բանկի հեռանկարային զարգացմանը, գլխավոր պահուստին հատկացնել 5%:

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշում կայացրեց՝ 2022թ. ֆինանսական արդյունքներով, սովորական անվանական բաժնետոմսերի գծով տարեկան շահութաբաժիններ չվճարել, Բանկի՝ ըստ ՀՀՄՍ 4,397,025 հազ. ՀՀ դրամի չափով զուտ շահույթն ուղղել Բանկի հեռանկարային զարգացմանը, գլխավոր պահուստին հատկացնել 5%:

կողմ՝ 169.397.282 ձայն կամ մասնակիցների ձայների 100%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Հարց 6. <<Յունիբանկ> ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ> և <<Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի կանոնակարգ> ներքին իրավական ակտերի գնահատում

Վարչության նախագահի տեղակալ, Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետբերման տնօրեն Օվսաննա Առաքելյանը ներկայացրեց, որ <<Յունիբանկ> ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ> և <<Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի կանոնակարգ> ներքին իրավական ակտերը վերահաստատվել են 24.06.2022թ. Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ, և 03.05.2023թ. Խորհրդի որոշմամբ առաջարկվում է նշված ներքին իրավական ակտերը թողնել անփոփոխ: Միաժամանակ նշեց, որ, հաշվի առնելով ՀՀ ԿԲ Կանոնակարգ 1-ում վերջին փոփոխությունները, կատարվում են համապատասխան փոփոխություններ <<Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի կանոնակարգ>-ում, որը կներկայացվի առաջիկայում կայանալիք Բանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի հաստատմանը:

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշում կայացրեց թողնել անփոփոխ <<Յունիբանկ> ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ> և <<Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի կանոնակարգ> ներքին իրավական ակտերը.

կողմ՝ 169.397.282 ձայն կամ մասնակիցների ձայների 100%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Հարց 7. <Յունիբանկ> ԲԲԸ կանոնադրությունում փոփոխությունների հաստատում:

Օվսաննա Առաքելյանը ներկայացրեց, որ ՀՀ ԿԲ <Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները> Կանոնակարգ 2-ում կատարված փոփոխությունների հետ կապված, որոնք մասնավորապես սահմանում են, որ բանկի էմիսիոն եկամուտը ներառվում է առաջին մակարդակի կապիտալի կազմում այն դեպքում, եթե բանկի կանոնադրությամբ

նախատեսված է, որ բանկի էմիսիոն եկամուտը կարող է օգտագործվել միայն <Բանկերի և բանկային գործունեության մասին> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի համաձայն կանոնադրական կապիտալի նվազեցման կամ բանկի անվճարունակության դեպքում կորուստները ծածկելու նպատակով կամ կարող է ուղղվել բանկի բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացմանը, առաջարկվում է Բանկի Կանոնադրության <Բանկի կանոնադրական հիմնադրամը, այլ հիմնադրամներ> 4-րդ հոդվածում ավելացնել 4.15-րդ կետը՝ հետևյալ խմբագրությամբ.

<Բանկի էմիսիոն եկամուտը կարող է օգտագործվել միայն <Բանկերի և բանկային գործունեության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի համաձայն կանոնադրական կապիտալի նվազեցման կամ բանկի անվճարունակության դեպքում կորուստները ծածկելու նպատակով կամ կարող է ուղղվել բանկի բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացմանը:>

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշում կայացրեց հաստատել <Յունիբանկ> ԲԲԸ կանոնադրությունում փոփոխությունները և ներկայացնել ՀՀ Կենտրոնական բանկ գրանցման:

կողմ՝ 169.397.282 ձայն կամ մասնակիցների ձայների 100%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Աննա Բադոյանը հայտարարեց, որ Ժողովի օրակարգի բոլոր հարցերը քննարկված են, որոշումներն ընդունված են, դիմեց ներկաներին հարցեր տալու առաջարկով: Լսարանի կողմից հարցեր չներկայացվեցին:

Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանը շնորհակալություն հայտնեց միջոցառման մասնակիցներին:

Բաժնետերերի ժողովն ավարտվեց ժամը 15:00-ին:

Գագիկ Զաքարյան **Նախագահ**	**Աննա Բադոյան** **Քարտուղար**

ք. Երևան, 23 մայիսի 2023թ.